Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար փորձաքննության *(կաթսայատան հակահրդեհային փորձաքննություն, կաթսայի տեխնիկական անվտանգության փորձաքննություն, վերելակների փորձաքննություն)* ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 դեկտեմբերի 2016 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Դ.Հարությունյանը, Գ.Օսիպյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Սարգսյանը և քարտուղար՝ Վ. Նավասարդյանը:

Օրակարգ

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.2 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը «Տեխնիկական Փորձաքննությունների Կենտրոն» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Արաբկիր 35 փ., տ. 7 ԱԱՀ վճարող չի Գնային առաջարկը/ՀՀ դրամ/	Նախահաշվային գներ
1	72000	164880
2	122000	231800
3	75000	150000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«Տեխնիկական Փորձաքննությունների Կենտրոն» ՍՊԸ-ին՝**
  - 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.2 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների,

ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լ.Հարությունյան

անդամներ _____ Դ.Հարությունյան

_____ Գ.Օսիպյան

_____ Ա. Խաչատրյան

_____ Գ.Սարգսյան

քարտուղար _____ Վ. Նավասարդյան